

3564  
3565

3566  
3567

3568  
3569

Суфле из яиц

9(47.925)  
2-24


2012

39-3271(=9) 7/7

# ՄԻՔԱՅԵԼ ՆԱՐԿԱՆԴԵԱՆ

(համաօս կենսագրութիւն)

(1830 — 1866)



800  
3271

ԲԱՐԵՒ  
Տ Ա Ր Ա Հ Ա Բ Ո Բ Ը  
1896.

ВІДРУЧАТЬ НАПРАВЛЯТИ

Дозволено цензурою, 12 ноября 1896 года, г. Тифлисъ.

115345-62


37047



Տպանս „Արօն“ բանկ

Միքայել Նալբանդեանց

## ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԻՇԱՆ ԴԵԱՆՑ



Միքայել Նալիշանցը ոռոսահայ գրականութեան մէջ այն անձնաւորութիւնն է, որին միայն կարելի է բուն պուրիցիս համարել իւր գաղափարների խորութեամբ եւ մտքի ընդարձակութեամբ։ Նրա սուր դիտողութիւնը, իւրաքանչիւր խնդրի խորք քափանցելու ձիրքը եւ բազմակողմանի բննադատական ընդունակութիւնը իրաւունք են տախ մեզ նրան ամբողջ գլխով բարձր համարելու մինչեւ այժմ ոռոսահայերի մէջ երեւան եկած բոլոր նրապարակախօններից եւ ժուրնալիսներից։

Նոյն իսկ Նալիշանցի բանասեղծական երկեր—ոռանաւորները, վիպական գրուածները ուրիշ ոչինչ են, երբ ոչ մի մի հրապարակախօնական յօդուածներ, տոգորված որու, նախադրեալ գաղափարներով։ Եւ ով կամենայ նրան մօսենալ իրեւ սեղծագործող-բանասեղծական ոյժի, կարող է չարաչար հիասքափել։ Հարկաւ, այս բանը մազի չափ չի նսեմացնում Նալիշանցի հոչակը, բանի որ իւր երեւամբ նա չէր ծնվել եւ չէր կարող զուտ սեղծագործող, անխառն բանասեղծ մնալու։

Իրեւ վարվուն եւ վերին աստիճանի նրբազգաց մարդ, նա կարողացել է երբեմն բանասեղծական բոլիչներ գործել։ Բայց բնածին հրապարակախօսի ողին միւս ծանրացել է նրա երեւա-

կայուրեան վրայ, եւ նրա բռիչքները եղել են տաս թոյլ: Բաւական է, որ նա կարողացել է իւր այս կամ այն գաղափարը հրապուրիչ բանասեղծական ձեռով արտայայտել, եւ նա իննին աւելի նեռու չի կամեցել զնալ: Իւր կեանքի ամենալաւ ժամանակամիջոցը անց կացնելով Ռուսիայի մտաւոր կենտրոններում — Մոսկվայում եւ Պետերբուրգում, շփմելով այդտեղ լիսունական եւ վարտունական բուականների գրականական գործիչների հետ, ուսումնասիրելով նրանց երկերը, ոգեւորվելով եւ տաս անգամ չափից դուրս յափեսակելով նրանց գաղափարներով, նա ձգտել է լինել մի տեսակ բարգման այդ գաղափարների ասխական անշարժուրեան մեջ բմրած հայ հասարակուրեան մէջ:

Եւ ո՞վ կարող էր այդ երշանիկ դերը աւելի յաջողուրեամբ կատարել, քան Նալբանդեանցը, որ կոչված էր իւր մայրենի հասարակուրեան մտաւոր եւ բարդյական կեաներում նոյն խոկ ուժօրմասօրի դեր կատարելու: Մեծ է եւ չափազանց ուժօրմասօր ածականը մի հայ գործիչի համար, նիւթ է, բայց երէ հայ հրապարակախօսական գրականուրեան մեջ կայ մի մարդ, որ իիչ թէ տաս արժանի է այդ բարձր կոչմանը, դա միայն եւ միմիայն Նալբանդեանցն է: Հետեւաբար աւելի քան հետաքրքրական եւ պարտաւորական է ծանօթանալ նրա՝ գեր համառօս՝ կենսագրուրեան հետ:

Միքայէլ Նալբանդեանցը ծնվել է Նոր-Նախիչևան քաղաքում 1830 բուականի հոկտեմբերի 27-ին եւ մեռել 1866 բուականի մարտի 31-ին, ուրեմն երեսուն ու վեց տարին դեռ չը լրացած: Գոնք այսպէս է գրված նրա մահարձանի վրայ, որ կանգնեցրել է նրա նոյր՝ Վառլառէ Մեսիկեանը նրա գերեզմանի վրայ, թէեւ Նալբանդեանցի ամենամանամասն կենսագրուրիւնը կազմող մի պարոն<sup>\*)</sup> չի վատահանում նուրիտ համարել նրա ծննդեան բուականը:

<sup>\*)</sup> ծանօթուրիւն. Պ. Ե. Շահազիզ, որ Մոսկվայում պ. Մ. Բարիսուդարմանի խմբագրութեամբ լոյս տեմող «Հանդէս գրամբնական» և պատմական» ժողովածուի 1896 թ., VII-դ հասարաւում տայել է «Նալբանդեանցի կենսագրութիւնը»: Այդ յօդուածի մէջ պ. Շահազիզը ամփոփել է այն բռոր նիւթերը, որ կարելի էր ձեռք բերել նայ- թէ պ. Շահազիզը ամփոփել է այն բռոր նիւթերը, որ կարելի էր ձեռք բերել նայ- թէ պ. Շահազիզը կենսագրութեան համար, ուստի զուռածք արժանի է խորին ուշադրութեան: Բայց այդ յօդուածից, որ ծանօթել է հիմք մեր ներկայ կենսագրութեան, ձեռքի տակ ենք ունեցել նաև. պ. Ղազարոս Սալահենցի «Խմ կեանքի զլխաւոր դէպքերը», պ. Ա. Երիցեանի «Գրիգոր Արքունու 25 տարուաց զրախն գործունէութիւնը», անունով Թերի մնացած բրոշւրը եւ «Միքայէլ Նալբանդեանցի համառօս կենսագրութիւն» միքնագրով առաջարանը, որ կցված է նրա Ղազար Փարպեցու «Թղթի» Թարգմանութեանը:

Նալբանդեանցի հայրը եղել է մի հասարակ խանուրպան, որին անուանել են «ուսա Ղազար» եւ որի միակ առեւտրական առարկան եղել է կուպրը: «Ուսա Ղազարը» կամ Ղազարով ամուսնացել է չորս անգամ եւ չորս ամուսնութիւններից ել ունեցել է զաւակներ: Միքայէլը ծնվել է չորրորդ ամուսնութիւնից, Ղազարովի Մարիամ անունով կնոջից: Այս կինը Միքայէլի հօր նետ ամուսնացել է այրի լինելով եւ իւր առաջին ամուսնուց ել ունենալով մի բանի զաւակներ:

Մինչեւ ուրիններ տարեկան հասակը Միքայէլը տեսել է միայն իւր ծնողների տունը եւ իւր հօր աղբատիկ խանուրը: Ականանենների ասելով, նա մի բոյլ կազմուածքով, վժիս դէմքով, բայց վառվրուն աշենրով եւ աշխոյժ մի մանուկ էր: Հայրը նրան տալիս է Նոր-Նախիչեանում յայտնի Օսկեն Եղիշէ անունով տիրացուի կամ խալիֆայի «վարժարանը»: Պարզ է, որ մի սգէս տիրացուի մօս մանուկ Միքայէլը, որքան եւս ընդունակ եւ ուսումնասէր լիներ, ոչինչ չէր կարող սովորել, բայց սաղմոսաւերից եւ սաղմոսից: Այնու ամենայնիւ, կարե ժամանակամիջոցում նա այնքան առաջդիմութիւն եւ ընդունակութիւն է ցոյց տալիս, որ նայրը շատպում է հանել նրան տիրացուի բրացուցիչ վարժարանից եւ յանձնել Տերգարդիկ Պատկանեանցին, որ տեղական խանաների մեջ համար-

Պատկանեանցի ուսումնարամում Միքայէլը մնում է 5—6 տարի: Այնուհետեւ հայրը նրան դուրս է բերում, որպէս զի մի գործի կամ արինեսի տայ: Նա կամենում է նրան իւր խանուրում պամել կամ տալ մի որեւէ վաճառականի իբրեւ գործակասար: Նա եկեղեցական տիրացուի պաշտօնը գերադասում է վաճառականական արինեսից, իբրեւ մի պաշտօն, որ համեմատաբար աւելի կապ կարող էր ունենալ նրա ուսումնասէր ձգտութերի հետ, քան կպրավանառի խանուրը:

Հայր Պատկանեանի վարժարանը, հարկաւ, Միքայէլին ոչինչ չը պիտի տուած լիներ, բայց հատուկոր գրաբարից եւ գուցէ բանի մի հին մատենագրների անզիր անելուց: Բայց եւ այնպէս դա միակ զիսութիւնն էր, որ պիտի դառնաւ պատահու ապագայ զարգացման հիմնաբարը: Միքայէլը սկսում է ինքնակրուեամբ պարապել:

Տասնուհինգ տարեկան հասակում նա սկսում է յանձնել ոմն Մկրտիչ Եղինեանի դպրոցը, որպէս զի մերականութիւն սովորէ: Այդ Եղինեանն էլ զուրկ է լինում իիչ թէ տաս լուրջ ուսումնից: Իբրեւ Վենետիկի Միքայէլը կենսագրութիւնից նախկին աշակերտ նա ունենում է սօլաստիկան ուղղութիւն: Հարկաւ, նրա «դպրոցը» չի կարողանում գոհացնել վարդուն Նալբանդեանցին, որի բնա-

կանից պայծառ եւ ամեն տեսակ հնամոլուրեան քշնամի հոգին ձգում էր դեպի ժամանակակից խկական զիտուրին եւ լուսաւորութիւն: Միքայելը խկոյն նկատում է իւր սահմանափակ վարժապետի զիտուրին եւ մի որ բացարձակ առում: «Եթէ նոր բան ունիս սովորեցնելու, սովորեցրու, թէ չէ, ես որ սովորեցրածը արդէն շատ ժամանակ է որ զիտեմ»: (Տես. «Հանդէս գրականական եւ պատմական» 1896 թ., հատոր VII-դի երես 12): Պէտք է ասած, որ Ներսէս Վ-դ կարողիկոսը, որ այդ ժամանակ, այն է՝ 1845 քուականին Քիշինեւից եջմանին զնալու միջոցին ժամանակաւորապէս կանգ էր առել Նոր-Նախշեւանում, հովանաւորում էր յիշեալ Եգենեանին, իբրև մի հմուտ եւրականագէտի: Նա ինքն էր հրամայել Նախշեւանի բոլոր բահանաներին եւ տիրացուներին այցելել Եգենեանի դպրոցը, եւ հենց այս հրամանից ստիպված էր Միքայել Նախանդեանցը որպէս տիրացու մտել եւրականագէտի դպրոցը:

Երբ Ներսէսին հաղորդում են պատանի աշակերտի յանդուզն պատախանը իւր վարժապետին, հրամայում է Նախանդեանցի զիտուրին բորձելու համար, պահանջել, որ նա մի գրաբար շարադրութիւն գրէ: Նախանդեանցը խկոյն յաջողուրեամբ կատարում է Վեհափառի հրամանը: Ներսէսը, հաւանելով նրա շարադրութիւնը, անմիջապէս ազատում է նրան Եգենեանի վարժարանը յանախելու ձանձրալի պարտականութիւնից:

---

Սյսպէս թէ այնպէս, Միքայել Նախանդեանցը տակաւին մի հասարակ տիրացու եր եւ երէ իւր պատօնակիցներից տարբերվում էր—լոկ իւր բնական ձիրենով եւ ոչ զիտուրեան պաշարով: Հարկաւոր եր այդ ձիրենը զարգացնել եւ մշակել, բայց ոչ շրջան կար, ոչ դեկավար եւ ոչ միջոցներ: Միակ շրջանը հոգեւորականութիւնն էր, միակ դեկավար—հայր Պատկանեանցը եւ միակ նիւրական միջոցը—տիրացութիւնից ստացած չնչին եկամուտը:

Ի՞նչ կարող էր անել Նախանդեանցը այս դրուրեան մէջ: Բայց տաղանքը այն ադամանն է, որ խաւարի մէջ էլ փայլում է: Նախանդեանցի խաւար շրջանավայրում յայտնում է մի սահսնակ, որ խկոյն նեմարում է լուսատու ադամաննը եւ առնում նրան իւր մօս: Դա բեսարաբիայի թեմական առաջնորդ Մաքրէոս սրբազն Վեհափետանն էր: Այդ մարդը, իւր թեմը շրջակայելիս, մի անգամ մտնում է Նոր-Նախշեւան: Հայր Պատկանեանցը, իւր իշխանաւորին այցելելիս, երեմն իւր նետ սահում էր եւ Միքայել

Նախանդեանցին, որպէս իւր տիրացուին: Խոկ մի անգամ զովասանին արժանի բահանան, որ վճռած է լինում սրբազնի ուշադրութիւնը դարձնել Միքայելի վրայ, սիփում է իւր «փոքրաւորին» առաջնորդի մօս կարդալ իւր շարադրութիւններից մէկը: Վեհապետանը շատ հաւանում է Միքայելի շարադրութիւնը եւ, զգալով, որ այդ պատանին սովորական մահկանացուներից չէ, ընդունում է նրան իւր մօս իբրէւ անձնական բարտուղար:

Սիա այդ օրից սկսվում է Նախանդեանցի հասարակական գործունեութիւնը, որ ապագայում դարձաւ այնքան փորորկալից: Հետզինետէ նա իւր բնդունակութիւններով, արտայայտած մժերով եւ համարձակութեամբ այնքան է գրաւում առաջնորդին, որ դառնում է նրա մշտական խորհրդատուն: Նա ուղեկցում է առաջնորդին ամենուրեմ, ուսումնասիրում է թեմի բոլոր եկեղեցական ու հասարակական գործերը եւ, վերջ ի վերջոյ, իւր խելացի խորհրդների ընորհով, դառնում է սրբազնի ալեր ցո-ն: Բանը մինչեւ անգամ այնտեղ է հասնում, որ Մաքրէոս չի կարողանում առանց Նախանդեանցի խորհրդի ոչ մի բիշ թէ շատ խուռ գործ կատարել իւր թեմի վերաբերմամբ:

Առաջնորդական բարտուղարի այս բացարիկ դիրք ստեղծում է նրա համար թեմամիների մի մեծ խումբ, որոնցից շատերը մնացին անհատ մինչեւ նրա մահը, անբնդիատ աշխատելով վնասել նրա գործունեութեանը: Պակաս չի նպաստում այդ թեմամութեան զարգանալուն եւ նրա անհանգիս եւ կրեոս բնաւորութիւնը: Բնականից զգայուն եւ վարվուն երիտասարդը չի կարողանում իւր խողին հետ կօմպրօմիներ անել: Հասարակական տեսակետից իւրաքանչիւր մի օգտական գործ գրաւում ու յափատակում է նրան այնչափ, որ նա մոռանում է ամեն մի արգելք, արհամարհում է ամեն մի նախապատրմունիք եւ աներկիւղ դիմում այդ գործի իրականացմանը:

Ինչ ասել կուզե, որ Նախանդեանցի ամենասուաչին եւ ամենազօրաւոր թեմամիներն են դառնում աղաները, հայ ազգի այդ անխուսափելի թեմամիները: Տեղական հարուստները, իրանց ձեռնում ունենալով եկեղեցական եւ հասարակական գործերի դեկը, չեին կարող, իհարկէ, հաւս աշխով նայել մի երիտասարդի վրայ, որ յանդգնաբար անբնդիատ, առաջնորդի միջոցով, նրանցից հաւել էր պահանջում իրանց կատարած գործերի մասին: Մանաւանդ Նախանդեանցը փուշ է դառնում ամենից զօրաւոր աղաթարութիւն խալիբեանի աշխում, մի մարդու, որ լինելով Նախշեւանի բաղաբաղութիւմ, ոչ միայն բաղաբում, այլ եւ զիւերում այնպիսի մեծ համարումն էր վայելում, որ անձնիշան անում էր

այն բոլորը, ինչոր կամենում էր: Նա էր բաղաբային զործերի միահին կառավարիչը, եկեղեցական դրամների միակ զանձապետ եւ հասարակական մժերի միակ դեկազարը: Եւ ահա յանկարծ մի օր երեւան է զայխ մի չնշին տիրացու եւ ձգտում է վերջ տալ նրա անսահման իշխանութեամբ: Ի՞նչպէս կարող էին Խալիքեանը եւ նրա արքանեակների ստուար բանակը ներել նրան այդ բանը:

Բայց Նալբանդեանցը ոչ երկշու էր, ոչ շուտ վիճակով: Նա կազմում է մի բնդիմադիր կուսակցութիւն այն մարդկանցից, որոնք դժգոհ էին Խալիքեանի գործունեութիւնից: Նոր կուսակցութեան զրոխն է անցնում մի՛ համեմատաբար լուսամիտ՝ վանառական—կարապէտ աղա Հայրապէտեանցը: Եւ ահա Խալիքեան էւ Հայրապէտեան կուսակցութիւնների մեջ սկսվում է եւ երկար տարիներ տեղում ճիշտ Մօնտեկիների եւ Կոպոլեստիների մի կատաղի կոփւ:

Բանն այն է, որ տարիների ընթացքում Խալիքեանի ձեռքում հաւաքիւ էր մի անազին գումար, որի մասին նա չէր ուզում ոչ ոքի հաշիւ տալ: Նրան լրբացրել էր ինքը Ներսէս կարողիկոսը, որ ենքարկած էր Խալիքեանների ազդեցութեանը: Ահա ուրեղից ծագեց ոխակալ Ներսիսի քենամութիւնը դեպի Նալբանդեանցը, մի քենամութիւն, որ ապագայում կանգ չառաւ նոյն իսկ վերին աստիճանի բամբեկի միջոցների առջեւ հակառակորդին վճառելու համար...

Խալիքեանը այնին էր երես առել, որ, բացի դրամականից, ձգտում էր կառավարել եկեղեցու եւ բարոյական մասը: Նա այնուամ էր իշխում տեղական հոգեւորականութեան վրայ, որ նոյն իսկ քեմի առաջնորդ Մատրեոսը, վախենալով Ներսիսի հովանաւորութիւնից, չեր կարողանում սանձահարել ինքնիշխան աղային: Վերջապէս, մի օր Մատրեոսը դիմում է կարողիկոսին եւ հարցնում, արդեօֆ արդարացի<sup>հ</sup> է, որ Խալիքեանը ձգտում է ամեն ինչ կարգադրել իւր մինի համաձայն: Այս հարցը դիպչում է Ներսիսի ինքնափրութեամբ. նա շատ առաջում է մի կոնդակով ներբել Խալիքի լիազօրութիւնը մինչեւ անզամ յանդիմանել առաջնորդին, որ «իրեն բոյլ է տալիս կարծելու, որ Հայոց կարողիկոսը կարող է եկեղեցական գումարը մի մասնաւոր մարդու յանձնել»: (Տես „Հանդիս գրականական եւ պատմական“, հատու VII-դ, երես 27—28):

Այն ժամանակ առաջնորդը սկսում է աւելի համարձակ կերպով հաշիւ պահանջել Խալիքից: Բայց Խալիքեանները նորից կարողիկոսին քեմում են իրանց կողմբ, եւ եկեղեցական գումարներն

ու եկամուտները շարունակում են մնալ Խալիքի իշխանութեան ներքոյ: Վերջապէս, առ աջնորդը, նարահատված, դիմում է մարտնաւոր իշխանութեան միջամտութեանը եւ «նախարարից հրաման է սահնում ոչ միայն չը տալ Խալիքին 1848 քուականից յետոյ գոյացած գումարները, այլ եւ խսիւ պահանջել նախկին գումարը»:

Մատրեոս արքազանի, այս հրամանի վրայ հիմնվելով, կազմում է մի յանձնաժողով եկեղեցական գումարների խնդիրը լուծելու: Այդ ժամանակ Նալբանդեանցը Նոր-Նախիջեւանից բացակայ է լինում, բայց դեկազարում է յանձնաժողովի գործունեութիւնը: Յանձնաժողովը Խալիքից պահանջում է աւելի խան 123 հազար ռուբլի, իսկ Խալիքը ցոյց է տալիս բնդամենը 83 հազար ռուբլի:

Կուսակցական կոփւը խանի զնում պիտիան սուր կերպարանից է սահնում, բաղաբ բաժանվում է երկու մասի: Փողովրդի մեծամասնութիւնն անցնում է Հայրապէտեան—Նալբանդեան կուսակցութեան կողմ:

Կակայն, կոփւը դեռ չը վերջացած, Նալբանդեանցը, զգուելով հոգեւոր պատօնից, բողնում է ու հեռանում Մոսկվա...

Իբրեւ գրող՝ Նալբանդեանցը առաջին անգամ ասպարեզ է զայխ Տէր-Գարբիէլ Պատկանեանցի խմբագրութեամբ Թիֆլիզում լոյս տեսնող «Արարատ» շաբարարերում (1850—1851 թ.), ուր նա սպում է իւր առաջին երեխայրիք—երեք ուսանաւոր, երկուսը գրաբար, մեկը ածխարհաբար: Այսեղ նա, մի կողմից ծալրում է «յիմարների կարծիք» ուսման մասին, միւս կողմից, ցոյց է տալիս ուսման անհրաժեշտութիւնը:

Մոսկվա ուղեւորվում է Նալբանդեանցը 1853 քուականին: Այդտեղից նա շուտով զնում է Պետերբուրգ, յաջող հնենութիւն է տալիս, սահնում է Հայոց լեզուի ուսուցչութեան իրաւունք: Ենքաղրվում է, որ այդ հնենութեան յաջողութիւնը Նալբանդեանցը ոչ այնին իւր գիտութեանն է պարտական, որքան Խաչառուր աղա Լազարեանի աջակցութեանը, որի անունով նա մի յանձնարարական համակ է բերած ինում Մատրեոս արքեպիսկոպոս Վեհապէտեանի կողմից: Նոյն Լազարեանի հոգանաւորութեամբ նա հևանակվում է Լազարեան նեմարանի ուսուցիչ հայոց լեզուի եւ շատ առաջում է ուղեւորվել Մոսկվա:

«Մէկ օր էլ, պատմում է Նալբանդեանցի աշակերտներից մեկը, յանձնարձ կմինի հետ դասարան մտաւ մի բարակ-բարակ, միջին հաստկով երիտասարդ: Տեսուչ նրան ծանօթացեց մեզ նետ, յայտնելով,

որ այսուհետեւ նա պէտք է մեզ հայոց լեզուի դաս տայ: Մեր առաջ կանգնած էր Միքայէլ Նալբանդիանը: Ճշմարիչը խոսովանած նորա չոր կազմուածքը, դէմի խուռ զծագրութիւնը, սափրած ընչացքով ու մօրունով (?) երեսը եւ կարս ժրաւիլ առաջին նուազ տա էլ ախորմելի սպառութիւն չարին մեր վրայ: Բայց այդ անախորժութիւնը շարունակուեցաւ մինչեւ տեսչին նորան մեզ ծանօթացնելու պատօնական ծիսակատորթեան վերջանալը, որովհետեւ երբ որ տեսուչը զնաց, եւ նա ամբիոն բարձրանալով, սկսաւ իւր առաջին դասը, կերպարանավախուեցաւ. նորա առանց այն էլ փայլուն աչենքը կրակով լցուեցան եւ ենեսը մի այնպիսի զեղեցիկ եւ գրաիչ արտայայտորթին սասցաւ, որ խփյօն յափէտակեց մեր սկրը եւ ընդ միտ կապէց մեզ իւր նետ: Նա խօսում էր ազատ այն ժամանակուայ մանուր աշխարհաբառով, չէր կմկնում, չէր կակազում. նա բառերը հնչում էր մատուր առողանութեամբ եւ, որ զիսաւորն է, նախադասութիւնները շատ հարցաւորթեամբ կոկում էր եւ միտքը յայտնելու համար բառեր ու ոներ չէր որոնում: «Տղայք, բողնենի գրաբարը, այսուհետեւ մենի աշխարհաբար պէտք է սոլորենի»—այս խօսերով նա սկսաւ իւր դասախոսութիւնը: Եւ մենի սկսանի աշխարհաբար սոլորել... (Տես. „Հանդէս գրականական եւ պատմական“ հատոր VII-դ, երես 47):

Դժբաղդաբար, երկար ժամանակ չի տեսում Նալբանդեանցի ուսուցչութիւնը: Ներսէս կարողիկոսը, Նալբանդեանցի նախիջեւան քօնամիների դրդումով, դիմում է Մոսկվայի ոստիկանապետին, որ բոնել տայ նրան իրեւ փախստական եկեղեցականի եւ հետապով էջմիածին ուղարկէ: Նալբանդեանցը բանդարկվում է, բայց շուտով Ստեփանոս Նալբարեանցի եւ Տէր-Մովսէս Ալամբանեան աւագ բահանայի երաշխաւորութեամբ, արձակվում: Սակայն նա խոհնմութեամբ բողնում է ուսուցչական պատօնը եւ սկսում է աւելի լուրջ կերպով պարապել ինքնակրութեամբ:

Ահա այդ ժամանակ կազմվում եւ ամրանում է նրա մտաւոր ու բարոյական աշխարհանայեացքը յիսունական բուականների ուսու ազատամիտ հեղինակների եւ գործիչների ազդեցութեամբ: Բացի ինքնազարգացումից, նա սկսում է յանախել Մոսկվայի համալսարանի բժեկական ֆակուլտետը իրեւ ազատ ուսկնոյի եւ շուտով ձեռում է բերում մեծ ազդեցութիւն հայ ուսանողների վրայ: Նրա առողջ դասողութիւնը, համակրելի ձգտումները, հայ կեանի ու լեզուի մասին ունեցած տեղեկութիւնները եւ կրակոս բնաւորութիւնը գրաւում ու յափէտակում են ամենին եւ կամայ-ակամայ ենթարկում նրա ազդեցութեամբ:

Այդ ժամանակ Ստեփանոս Նալբարեանցը սկսում է իւր կոփիր իին սերնդի ներկայացուցիչների եւ նրանց դաւանած փտած գաղափարների դէմ: Նալբանդեանցը անցնում է նրա կողմք, եւ երբ 1858 բուականին Նոր-Նախիջեւան, նոր առաջնորդը բեւ հաշտեցրել եր քենամի կուսակցութիւնները, բայց չէր կարողացել կամ չէր կամեցել լիովին գոհացնել Հայրապետեան կուսակցութեամբ: Պատճառն այն էր, որ նա բաւականացել էր Խալիքից փոխանակ 123 հազարի, 50 հազար բուբի զուտ զումար վերցնելով եւ մի խանի խոսումներով, որ Խալիքը տուել էր եւ չէր կատարում: Բացի դրանից, Այլազեանը այդ 50 հազարն էլ ապօրինաբար գործադրում էր Նախիջեւանից դուրս:

փայլը»—դառնում է նրա ամենաառաջին եւ ամենատաղանաւոր աշխատակիցը:

Սխալ է այն կարծիքը, թէ Նալբանդեանցին Նազարեանցն է առաջ բաւել, գրականական ուղղութիւն տուել: Բնածին տաղանձները ուրիշների ուղղութեանը հետեւելու կարիք չունեն: Նազարեանցի «Հիւսիսափայլը» ծառայել է Նալբանդեանցին իրեւ մի ամբիոն, որտեղից նա կարողացել է արտայայտել իւր գաղափարները: Նալբանդեանցը մնալու եր նոյն Նալբանդեանցը որտեղ եւս աշխատակցէր, ուր եւս գրէր, թէկուզ մի ամենայետադիմական օրգանում: Նոյն խկ, իբրեւ գրող, նա շատ աւելի վաղ է յայտնի եղել բան. «Հիւսիսափայլը»: Նրա «Մինին խօսք, միւսին հարս» վեպը, որի նիւրը առնված է Նախիջեւանի կեանիցից, նրա ինքնուրոյն, բարգմանական կամ նամանողութեամբ գրված ուսանուրուերը եւ «Թափառական հրեայի» առաջին հատորի բարգմանութիւնը «Հիւսիսափայլից» շատ առաջուայ գործեր են: Խկ «Հիւսիսափայլին» նա անընդհատ աշխատակցել է երեխ տարի: Այդ կարճ ժամանակուայ ընթացում նա շատ բան գրեց, շատ խնդիրներ զարքեցրեց, շատ մտել շարժեց եւ սրափեցրեց բմրութիւնից: Եւ այդ բոլոր առանց որեւէ կողմնակի ազդեցութեան, ենթարկվելով լոկ իւր ինքնուրոյն հոգու ձգտումներին:

Ոչ այս անընդհատ գրականական աշխատութիւնը, ոչ համալսարանական դասախոսութիւնները եւ ոչ ինքնազարգացման գործը չը կարողացան Նալբանդեանցին մոռացնել տալ իւր նեռաւոր ծննդավայրի հասարակական խնդիրները: Խալիքեան—Հայրապետեան կուսակցութիւնների պայտարը եւ եկեղեցական գումարների մասին շարունակվող վեճը տակաւին նրան հանգստութիւնն չին տալիս: Նա ձգտում էր նեռուից միջամտել այդ պայտարին եւ ղեկավարել հակախալիքեանների գործունեութիւնը:

Բանն այն է, որ այժմ նեսարաբիայի թեմի վիճակաւոր էր Գաբրիէլ վարդապէտ Այլազեանը, մի մարդ, որ զուրկ էր Մատքէն արքեպիսկոպոսի ուղղամտութիւնից եւ անկեղծութիւնից: Գալով 1858 բուականին Նոր-Նախիջեւան, նոր առաջնորդը բեւ հաշտեցրել եր քենամի կուսակցութիւնները, բայց չէր կարողացել կամ չէր կամեցել լիովին գոհացնել Հայրապետեան կուսակցութեամբ: Պատճառն այն էր, որ նա բաւականացել էր Խալիքից փոխանակ 123 հազարի, 50 հազար բուբի զուտ զումար վերցնելով եւ մի խանի խոսումներով, որ Խալիքը տուել էր եւ չէր կատարում: Բացի դրանից, Այլազեանը այդ 50 հազարն էլ ապօրինաբար գործադրում էր Նախիջեւանից դուրս:

Այս բոլոր գրգուել էր առանց այն էլ դիւրագրգիռ Նալբանդ-

եանցին Այլազեանի դէմ: Մի կողմից նա անխնայ ժննադատում էր առաջնորդի գործունեւթիւնը եւ դատապարտում մամուլի մէջ, միւս կողմից, անքիւ նամակներով իւր բարեկամներին գրգռում նրա դէմ: Նա ոչ մի գոյն չէր խնայում իւր ատելի հոգեւորականի պատկերը մքնացնելու համար: Մանաւանդ նա վրդովկում էր Այլազեանի ըմբոստորիւնից վեհափառ Կարողիկոսի դէմ: Այդ վարդապէտը, որ սովորութիւն ուներ շուրջ շուրջ ուշաբերականներ ուղղել իւր քեմի հայերին, մի շրջաբերականի մէջ եւս խօսում է կարողիկոսի եւ առաջնորդի յարաբերութիւնների մասին: Նալբանդեանցին կատաղեցնում է այդ շրջաբերականը, եւ նա գրում է իւր բարեկամներին մի բույր, որի մէջ ահա քէ նա ինչ լեզու է բանեցնում Այլազեանի դէմ.

«Հայեր, եքէ տակաւին չէ՞ ամաշում պարձենալ ձեր կրօնի անկախութիւնվը, եքէ տակաւին ձեր սրտի խորհում մնացէլ է այն սուրբ զգացմունքը, որ մի ժամանակ ոզի էր տախս ձեր ազգին եւ կրօնի պատապաներին—չը պէտք է քոյլ տաք, որ մի սեւահոզի (հազար փառ), հաւաքը օրացոյց շինող եզրիս արեղայ իւր կեդոս ուերու կրօնի ձեր ազգին սրտերը եւ կրտահ ձեր կրօնի այն սուրբ կապը, որ համարեա միայն պահի է մինչև այսօր Հայի ազգութիւնը:

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
Գտանզգես զայլը մեզ զուխ դառաւ.  
Սուրբ խորան պղծեց, արդ ո՞ւր աղօրենք—  
Զիմի Է՞լ լրենք....

Այլազեանը, Լօյզլայի հարազա ժառանգը զոլով ամենայն կողմից ուզում է ծածկել իւր կոչ եւ կոպիտ երկպատակասիրութիւնը, փառամուրթիւնը, պատամբութիւնը նետենալ փափուկ խօսերով թրիք (խօսքը շրջաբերականի մասին է) վերջում, իր «Հնազանդեցէր էլի ս. Սրբանին, Սրուակալին...» Բայց չ'խարվէք, եղբարք, զիսաւոր միտքը սկզբումն է եւ բայց բղիք բովանդակութիւնում: Այդ այն օրուն է, որով երեխաներին բնացնում են:» (Տես «Հանդէս գրականական եւ պատմական», հատոր VIT-դ, երկու 73—74):

Հասկանալի է, որ մի այդշափ կրտոս եւ դիւրագրգիռ մարդ, որ խնայել չը գիտէր իւր ատած մարդկանց, իւր գրչի ամեն մի արդիւնքով աւելացնում է քենամիների առանց այն էլ սուրար բանակը, որն ոչինչ չի խնայում նրան վնասելու համար: Բայց Նալբանդեանցը բարեկամներ էլ է ունենում, որոնց թւում առաջին տեղն է բնեում նրա նախկին իշխանաւոր Մատքուսարքնեպատու վեհապետանը: Այդ արժանաւոր հոգեւորականը, զնահատելով իւր ժամանակից տաղանը, միւս ձեռնից եկած օգնութիւնը հասցնում է նրան քէ բարոյապէս եւ քէ նիւրապէս: Իսկ Նալբանդեանցը նիւրական պակասութիւն շատ ուներ: Գրականութիւնը նրան ոչինչ չէր տախս. ուսուցութիւնից էլ գրկիլ էր: Մնում էր, որ նա

դիմէ իւր անձնական բարեկամների օգնութեանը: Այս դեպքում, բացի Մատքուսից, նրան նպաստում էին Հայրապետանցը եւ Սալսիկեանցը:

Վեց տարի (1853—1859 թ.թ.) մնալով Մոսկվայում, անդադար աշխատելով, գրգռվելով, բորբոքվելով եւ, չը նայելով բարեկամների օգնութեանը, վարելով նիւրական սուղ կեանք, Նալբանդեանցը բայխում է իւր, առանց այն էլ բոյլ, առողջութիւնը: Վերջապէս նա այնքան վատ է զգում իրան Ֆիզիկապէս, որ իւր բարեկամների եւ բժշկների խորհրդով վճռում է զնալ արտասահման, բայց ոչ միայն բժշկվելու նպատակով, այլ եւ աշխարհ տեսնելու, կեանք ուսումնասիրելու եւ իւր մտաւոր հորիզոնը ընդլայնելու ցանկութեամբ:

Մոսկվայից ուղեւորվում է արտասահման 1859 թ. մարտի 24-ին: Միայն մի ամիս մնալով հանճային ջրերում, նա տապում է Վիեննա, Բեռլին, Համբուրգ եւ, վերջապէս, Փարիզ: Հասկանալի է, որ արտասահմանեան ազատ մքնոլորդը նրա զգայուն հոգու վրայ մեծ տպաւորութիւն է գործում: Նա ամեն բան, ինչ-որ կարող էր տեսնել, դիտում է, ուսումնասիրում եւ իւր սպաւորութիւնների միայն մի չնչին մասն է կարողանում արտայայտել երկու նամակների մէջ, որոնք սպիտում են այսպիս եւ առաջարկութիւնում: Այդ այն օրուն է, որով երեխաներին բնացնում են:» (Տես «Հանդէս գրականական եւ պատմական», հատոր VII-դ, երկու 73—74):

Դժբաղդաբար, Նալբանդեանցը, նիւրական միջոցների պակասութեան պատճառով, արտասահմանում մնում է ընդամենք վեց ամիս: Նա բոլնում է կիսատ իւր բժշկութիւնը եւ նոյն բայխայված առողջութեամբ վերադառնում է Ռուսասան, տխուր եւ վհատված:

Այս անգամ նա հաստավկում է Պիտերբուրգում, մտադիր լինելով այդտեղի համալսարանում արեւելեան լեզ. Ֆակուլտետի կանդիդատի հմնութիւն տալու: Միեւնոյն ժամանակ, նա նորից ձգտում է դեպի արտասահման: Բայց անողոք նիւրականը կապում-կաւեկանում է նրան: Իւր բարեկամներից մեկին ուղղած մի նամակում, ցանկութիւն յայտնելով 2 տարի ժամանակով Փարիզ զնալ իւր ուսումը շարունակելու համար, նա խնդրում է տալ իրան տարեկան 800 րուբի:

Այդ նամակը գրելու միջոցին Նալբանդեանցն արդէն կոված էր Նալբանդեանցի հետ: Եւ մի կողմից էլ նէնց այս հանգամանքն է դրդում նրան Մոսկվայի փոխարեն Պիտերբուրգում հաստավել արտասահմանից վերադառնալուց յետոյ: Պ. Ե. Շահագիզը, մանրամասն

բացատրելով այդ երկու զաղափարակիցների բնաւորութիւնը ասում է, թէ նրանց մէջ երբէք սերտ բարեկամութիւն չի եղել: Ժամանակակիցների պատմելով՝ նրանց փոխադարձ դժկամակութիւնը տեղի է ունեցել Նալբանդեանցի յօդուածների եւ գլխաւորապէս լեզուի մասին: Նազարեանցը սրվորութիւն է ունեցել, ի միջի այլոց, ուղղել եւ Նալբանդեանցի յօդուածները եւ շատ անգամ ձեռնամուխ լինել նրանց էական իմաստին, աղաւաղելով հեղինակի ասածները: Յայսնի բան է, Նալբանդեանցի պէս մի ինենուրոյն հեղինակ չէր համաձայնվիր՝ թէկուզ Նազարեանցի պէս մի հեղինակաւոր խմբագրի՝ բոյլ տալ իւր մտերը աղճատելու: Եւ ահա տաղանտաւոր աշխատակցի եւ խմբագրի մէջ ծագում է գծութիւն:

Բայց այդ բացատրութիւնը տալիս են Նալբանդեանցի ժամանակակիցները: Խսկ ինքը Նալբանդեանցը մի փոքր ուրիշ կերպ է բացատրում իւր դժկամակութիւնը: Ահա թէ նա ինչ է գրում իւր բարեկամներից մէկին ուղղած մի ընդարձակ նամակում.

«Հիւսիսափայլից» ձեռք վեր առի, ըսորում մի ժանդոս կոպէկ չեմ սանում. ի՞նչ նարկաւորութիւն ունեմ է ծի նահատակ լինելու: Այդ ի՞նչ ինելազարութիւն է, որ ես ուրիշից պարտ առնեմ ապրեմ եւ «Հիւսիսափայլից» վերայ տիւ եւ զիւեր աշխատեմ, բայց «Հիւսիսափայլից» մի կոպէկ չ'սանամ, այդ ո՞ր զրի մէջ զրած է: Եւ ո՞ր մարդը, որ չունի բնակութիւն, կերակուր եւ զգես, կարող է զրծ կատարել եւ այն ձրի...»

Շարունակելով նոյն ուղղութեամբ, Նալբանդեանցը իւր սրի դառն եւ արդարացի մաղձը բափում է հայ ազգի վրայ.

«Գրիշս պիտի կոտեմ եւ ձգեմ. միւս անգամ Հայոց ազգի անոնը տուած ժամանակները եւս պիտի սիրս խառնվի եւ փսխելիքս զայ. ահա եղբայր, այժմ իմ դրութիւնը եւ յուսանաւորեան չափը: Ափսոս ինձ, որ երեւեցա Հայերի մէջ, մի այլ ազգի մէջ երբէ այս վիճակում գտնվելու չէր ես, անտե եւ անօքնական... (Տես «Հանդիսական պատմական», հատոր VII-դ, երես 89-91):

Մենք դիմամբ ենք բերում այս կտորը եւ դիմամբ ընդգծում այն տողերը, ուր Նալբանդեանցը իւր մախճն ուղղում է հայ ազգի դէմ: Մեր ժամանակի մի խանի մանր-մունք եզրուիներ, որոնք իւրանց խոռ եւ շողոնորող բնաւորութեան շնորհով դեռ եւս կարողանում են մամուլի մէջ տեղ զտնել եւ որոնց խվական ասպարեզը մանրավանառի խանութն է, սովորութիւն ունեն մեր ժամանակակից գործիչների եւ գրողների եսեւից ցեխ զցելիս, Նալբանդեանցի նիւրական անմիտքար դրութիւնը օրինակ բերել իիրեւ ապացոյց, թէ զործիչը եւ գրողը միւս պէտք է բաղցած մնայ: Թող այդ փարփակները կարդան Նալբանդեանցի յուսահատական տողերը եւ այն ժամանակ գուց լուսն, տեսնելով, թէ ինչպէս Նալբանդեանցի ամեն

մի քոիչքը ընդհատվում էր նիւրականի անողոք հարուածով: Բայց Նալբանդեանցը այդ տողերը գրել է գրերէ սրանից բառասուն տարի առաջ, երբ հայ նասարակութեան միտքը դեռ խաւար էր: Խսկ այժմ, երբ հասարակութիւնը պարձենում է իւր բաղաբակրութեամբ, մի՞ք է հայ գործիչի, հայ գրողի վիճակը նոյնը չե...

Նոյն նամակի մէջ Նալբանդեանցը առաջ է բերում եւ «Հիւսիսափայլից» բաժանորդների քիւր եւ ծախքը 1859 թ. համար: Նամակի այդ կտորից իմանում ենք, որ «Հիւսիսափայլը» այդ տարի ունեցել է 340 բաժանորդ, 1800 բուրքի ծախք, բացի գրանից, Նազարեանցը սացել է պարզեւ 600 բուրքի: Թէ ինչ պարզեւ է եղել, այդ Նալբանդեանցը չի ասում: Նա միայն ուզում է ապացուցանել, որ Նազարեանցը կարող էր նրա աշխատանքը վարձարեկ եւ չէր վարձարում: Բայց մի՞ք Սևփաննոս Նազարեանցը կարող էր հարսահարիչ լինել:—Ո՞չ, իհարկէ, ո՞չ: Ուրեմն, մեռւմ է, որ մենք էլ Պ. Ե. Շահազիզի հետ «Նալբանդեանցի ասածները բիւրիմացութեան արդիւնք եւ բոպեի ազդեցութեան տակ գրուած» համարենք...

Պետքուրգում Նալբանդեանցը 1860 թուականին, ի միջի այլոց, զբաղվում է եւ Հնդկաստանի հարուս հայազգի Մասեն բարաջանի կտակի խնդրով: Մի խնդիր, որ 66 տարի էր, անորոշ էր մեացել: Այդ կտակով հանգուցեալ բարաջանը իւր կարողութեան կեսը, որ 31 հազար 280 բուրքու արժողութեամբ անշարժ կայք էր, նույրել էր Նոր-Նախիջեան՝ հայերի օգտին: Նալբանդեանցը, դեռ արտասահման զնալուց առաջ, բարաջանի կտակագրի պատճենը սահալով Նախիջեանի Մագիստրատից, իւր մեկ նախանութեամբ եւ յառաջաբանով տպագրել էր «Հիւսիսափայլում»: Նա առաջարկել էր՝ մի պատգամաւոր ուղարկել Հնդկաստան, որ կտակի իրագործման մասին հոգայ: Այժմ նա, իւր համալսարանական ըննութիւնները վերջացնելով, զալիս է 1860 թ. գարնանը Նոր-Նախիջեան, որպէս զի անձամբ աշխատ այդ գործի համար: Այսեղ նրան ընտրում են պատգամաւոր, հանապարհածախս են տալիս եւ ուղեւորում Հնդկաստան:

Բայց, նախ բան արտասահման զնալը՝ Նալբանդեանցը գրենում է Էջմիածին, որպէս զի իւր բղբերը վաւերացնէ Մատքու կարողիկոսի ձեռքով: Էջմիածինց նա հանապարհ է ընկնում

Կ.-Պոլիս, ուր մեռում է Երկար ժամանակ, յափչտակվելով տեղական հայերի կեանեով: Այսեղ նա սկսում է մասնակցել հասարակական գործերին եւ գրել տեղական լրագրներում: Այդ ժամանակ Պօլսեցիները բաժանված եին Երկու կուսակցութիւնների, որոնցից մեկը բաղկացած էր ամիրաներից եւ եֆենդիներից, միւսը — ծողովրդի ներկայացուցիչներից: Նալբանդեանցը բնականաբար անցնում է Երկրորդ կուսակցութեան կողմբ: Առանձնապէս նա զբաղվում է այսպէս կոչված «Պօլսեանների» եւ «Ապօլոսեանների» վեճով, որ առաջացել էր Վանի առաջնորդ Պօլս վարդապետի մի շարք ապօրինի արարքների ժնորհով: Նա անցնում է ապօլոսեանների կողմբ եւ սկսում է մի կատաղի կոխ պօլսեանների դեմ: Նա, ի միջի այլոց, սպում է մի բանի յօդուածներ Սլանեանի խմբագրութեամբ լոյս տեսնող տասնօրեայ «Մեղու» լրագրում, որ ապօլոսեան կուսակցութեան օրգանն էր եւ առանձնապէս ծալրում, ծալակոծում պօլսեանների օրգան «Երեւակի» խմբագիր Զամուռնեանին:

Վերջապէս, նա քողնում է Կ. Պոլիսը եւ շարունակում իւր նանապարհորդութիւնը: Գնում է Փարիզ, այդտեղ մեռում Երկու ամիս, յետոյ անցնում է Լօնդոն եւ այդտեղից նաևով 1861 քուականներին նանապարհում դեպի Հնդկասան: Փարիզ եղած միջոցին նա գրում է իւր «Երկու տող» վերնագրով բրոսիւրը, ուղղած Փարիզի վարդապետ Այվագեանի դեմ:

Հնդկասանի մարտավայր Կալկաթայում Երկար ժամանակ մնալով, Նալբանդեանցը, վերջապէս, հազար ու մի նեղութիւններից յետոյ, կարողանում է Բաբաջանի կտակի օրինաւորութիւնը ապացուցանել անզիփական դատարաններում եւ գործը տանել: Այդ ժամանակ նա սովորում է բաւականաշափ անզիփերէն լեզուն:

Որուելով Նախիջեւանին հասանելիք տարեկան եկամուտը Բաբաջանի կալուածներից եւ ստանալով հաւաքված գումարի մի մասը, Նալբանդեանցը վերադառնում է Ռուսաստան: Ճանապարհին նա այցելում է Իտալիան, որի պատմական նրաւալիթերը, հարկաւ, խորը տպաւորութիւն են գործում նրա բանաստեղծական հոգու վրայ: Ռուսաստան գալով, նա ուղղակի Նոր-Նախիջեւան չի մըտնում, այլ անցնում է Պետերբուրգ, մտադրվելով յետոյ գալ՝ հասարակութեանը հաշիւ տայու: Բայց ահա ինչ է տառու պ. Տ. Շահազիրը այս առիրով.

... Նա ժամանակ չունեցաւ հաշիւ տալու իւր գործողութիւնների մասին, չկարողացաւ իւր նանապարհածախիմի, Կալկաթայում վարած դատի եւ ուրիշ ծախմերի մանրամասն ցուցակը ներկայացնել Նախիջեւանի հասարակութեան, ուսի եւ նորա ստացած գումարի խմական հասարակութիւնը անյայտ մնաց: Այդ վերջին հանգա-

մանն էր, որ պատճառ հուա չար մարդկանց չար լեզուներին լուրեր տարածելու հասարակութեան մէջ, թէ Նալբանդեանցը բոլոր ստացած գումարը չի յանձնել հասարակութեան, թէ այդ փողերի մի մաս իրան է առել եւ թէ, վերջապէս, նորանով հարսացել են նորա եղբայրները, ազգականները... Լուրեր, որ մինչեւ ցայսօր դեռ կարելի է լուն Նախիջեւանի հասարակութեան հին սենյին պատկանող մի բանի անձնառութիւններից, չեն տառու արդէն, որ այդ մասին ուղղակի ակնարկութիւններ կան Գարբիէ Եպիսկոպոսի «Խալիքեան ուստմանարանի պատմութեան» մէջ (Տես «Հանդէս գրականական եւ պատմական», հատոր VII-դ, երես 106—107):

Ինչ ասել կուզէ, որ բոլոր այդ լուրերը կասկածամիտ եւ չարսիրս մարդկանց ապականված երեւակայութեան ծնունդ են: Նալբանդեանցը, որ ապրեց եւ մեռաւ հասարակական շահները պատապաննելով, չեր կարող հասարակական գումարներին անմահուր ձեռներով մօտենալ: Գալով Գարբիէ Եպիսկոպոս Այվագեանին եւ նրա նմաններին, այդպիսինների «ակնարկութիւնները» գրօշի արժէք չունին, դադիված ինքնասիրութեան արդիւնք լինելով:

Բանն այն է, որ Նալբանդեանցը Պետերբուրգից գալիս է Նոր-Նախիջեւան՝ յատկապէս իւր գործողութիւնների մասին հասարակութեանը մանրամասն հաշիւ ներկայացնելու, բայց նանգամանները նրան արգելի են դառնում: Այդ ժամանակ է պատահում նրան այն դժբաղդութիւնը, որի մասին մինչեւ այսօր էլ այնքան թեր եւ դեմ կարծիքներ են պտտում: Ընթերցողներին, այս դժբաղդ դեպի մանրամասնութիւնները իմանալու համար, առաջարկում ենի կարդալ պ. Տ. Շահազիրի յօդուածը «Հանդէս գրականական եւ պատմական» ժողովածուի 1896 թ. VII-դ համարում:

Նալբանդեանցը ձերբակալվում է եւ Պետերբուրգ տանգում բնեութեան համար: Հետարքրական է, որ ինքը տաղանցաւոր նրա պարակախօսը իւր դժբաղդութեան մեղքը դեռում է Այվագեանի վրայ, որպէս թէ սա իշխանութեան աշխին կասկածելի դարձրած լիներ նրան... .

Այսպէս թէ այնպէս, Միհայէլի ծերունի ծնողները, չը կարողանալով դիմանալ իրանց որդու բացակայութեանը, խելագարվում են եւ մեռնում: Ինքը Նալբանդեանցը Պետերբուրգի մօտեն է ուղիղ Երկու տարի եւ տասն ամիս, ամբողջ ժամանակ պարապելով՝ գրելով, կարդալով եւ ուսումնասիրելով: Ի միջի այլոց, նա ուսումնասիրում է յունարէն եւ Եբրայէրէն լեզուները, որպէս զի Աստուածանի հայերէն բարգմանութիւնը համեմատէ յունարէն եւ Եբրայէրէն բնագրերի նետ: Նա պատրաստում է իւր «Համեմատութիւնը», գրում է մի բանի նինադատական յօդուածներ, ձեռնարկում է իւր «Նիւրեր Ֆիզիկա-Ֆիլոլոգիական—պատմական—աւ-

խարհագրական ներածութեան համար» աշխատութեան, պկում է կազմել աշխարհաբար լեզովի ներականութիւնը եւ այլն եւ այն...

Այս բոլոր աշխատութիւնները, նստղական կեանքը, Պետրուրգի սպանիչ կլիման օր օրի վրայ բայցայում են նրա առանց այն ել խանգարված առողջութիւնը: Թոքախոր, որ վաղուց արդէն բուն եր դրել նրա բոյլ կազմուածի մէջ, նետղինտէ զարգանում է եւ դառնում արագընթաց: Այն մի ժամի բարեկամները, որ յանախ այցելում էին նրան, (Սուլքանեանը, Տէր-Դրիգորեան հահանան եւ իւր եղբայրը) նկատում են իրանց բարեկամի օր օրի վրայ հալվելը, բէեւ Նալբանդեանցը աշխատում է միշտ նրանց մօս ձեւանալուախ եւ զուարք: Միայն երբեմն-երբեմն նրա բերանից քոչում է. «Ա-ն, այն Ալվազը» խորհրդաւոր խօսքը ...

Վերջապէս, այլ եւս իւր յոյսը կտրելով բժիշկների օգնութիւնից, Նալբանդեանցը 1865 թուականին բողնում է Պետրուրգը եւ զնում Սարատով նախանգի Կամիչին հաղաքը «ղըմք» խմելու: Բայց Պետրուրգի կլիման եւ կեանքի վատ պայմանները արդէն իրանց գործը կատարել էին: Նալբանդեանցը այժմ ժամերով եւ մօսենում գերեզմանին:

Կեանքի այդ դառն ժամանակամիջոցին Պետրուրգում մեր այժմեան գործիչներից ոմանք հանդիպում են Նալբանդեանցին եւ ծանօթանում: Մեր ձեռքի տակ կայ առ այժմ յիշեալ գործիչներից միայն Ղազարս Աղայեանցի մի համառօս նկարագիրը Նալբանդեանցի վերաբերմամբ: Առաջ ենք բերում այդ նկարագիրը ամբողջովին իւր անկեղծութեամբ յայտնի հայ նեղինակի «Իմ կեանքի գլխաւոր դեպքերը» գրից.

Պետրուրգի մօսեր կեանքի լ ներածութիւնը, ինչպէս ասացի, նման էր մի նեղեղի: Դրա առաջն սկսեցին առնել 65 թուականի վերջերից եւ սկսեց մի յետաշարժ ուղղութիւն: Այդ ժամանակ ծանօթաց ես Միքայէ Նալբանդեանցին, որ ազատութիւն ստացաւ զեներալ Սուլքանեանի երաշխաւորութեամբ: Այս մարդուն առաջին նախամատ ես տեսել էի թիմիս, ուր եկել եր էջմիածին զնալու համար: Այդ ժամանակ մենք յափշաւի եցանք նրա նարտար հայախօսութեան վրայ: Գրական լեզուն մենք դեռ ես բորբում էիմք. այլպէս չէր նալբանդեանցը. նրա լեզուն արդէն կազմակերպէլ էր եւ խօսում էր այնպէս, ինչպէս որ գրում էր: Խոկ հիմա նրան խօսել արդէն էին բժիշկները. բոքախոր մատել էր նրան եւ առաջւայ Նալբանդեանի ստերագիծն էր մնացել: Բայց որքա՞ն զարգացել էր մա-

ւրապէս եւ որքա՞ն յես թողել իրանից Ս. Նազարեանցին: Համակարգի չէր այլ եւս ոչ նրա լեզուն եւ ոչ նրա ուղղութեանը, համարելով նրան յետամնաց եւ պահպանողական: Նալբանդեանցը, աշխարհից կտրելով՝ չէր կտրւել ճամասակակից գրականութիւնից. շարունակ կարդացել էր միանուրեան մէջ եւ շաման էր մասնէ: Նրա գրանցերի մի մասը Մ. Տէր-Գրիգորեանցի ձեռքն ընկաւ, բայց թէ ո՞ւմ մօս մնաց յետոյ՝ ես չիմացայ: Գրուածներից նշանաւոր էր «Արկած Աղամայ» պօման, գրաւ թնիր գրաբարով: Այդ բանասեղծութիւնը զիմէ ի զուսի բերան էր արել Մ. Բուղալեանցը եւ ասում էր շաման: Գա մի շամանակի բանասեղծութիւն էր, նկարագրում է բնականի կոխը անբնականի դէմ, Աղամի վիճում է նեւեակի հետ, որ բոյլ չի տալիս նրան սիրելու եւալին: Հրաշալի էր մասնանդ սիրանաւած Աղամի եւ եւալի զեղեցկութեան նկարագիրը: Նալբանդեանցի սաղանը, մօսուր զարգացումը, լեզուի հարստութիւնը անհամեմատ բարձր էր Ո. Պատկանեանից, ինչ բնաւորութեամբ շիփ շիւակ էր Նալբանդեանցը, ինչպէս ուղիղ վեր բարձրացած մի բարդի, մինչդեռ Պատկանեանը գետնի եւեսին փուած մի տասակ էր, որի մօսուր անցնել չէր կարելի անպատճ: (Տես «Իմ կեանքի գըլաւոր դեպքերը», եւես 76—77):

Մենք միանգաման հաւատում ենք պատկառելի հեղինակի այն խօսերին, թէ Նալբանդեանցը կարող էր «իրանից յես թողած լինել Նազարեանցին, համակիր չը լինել ոչ նրա լեզուն, ոչ ուղղութեանը, համարել նրան յետամնաց եւ պահպանողական»:

Նազարեանցը գաղափարի մարդ էր, որու սկզբունքների զինւոր, գուցէ զինական, փիլիսոփայ, ինչ կամենաֆ, բայց իբրև գրող տաղանտաւոր չէր: Նա չուներ ոչ Նալբանդեանցի նուրբ զգայնութիւնը, ոչ ուուր բմբոնելու ընդունակութիւնը եւ ոչ ուուր դիտուական ձիրքը: Ուայէս կօմպիլիատօր—հրապարակախօս նրա մէջ ինքնուրոյնութեան ոյժը անհամեմատ աւելի բոյլ էր, բայ Նալբանդեանցի մէջ: Ուատի բնական է, որ յես պիտի մնար այն մարդուց, որ ոչ միայն ամեն օր եւ ամեն ժամ հնետեւում էր զաղափարների աշխարհում տեղի ունեցող երեւոյթներին, այլ եւ զիտէր եւ ընդունակ էր անմիջապէս եւ արագութեամբ բմբոնելու նրանց իմաստը, մարսելու եւ իւրացնելու:

Կամիչինում Նալբանդեանցը անց է կացնում 1865 եւ 66 թ. ձմեռը: Գարնան սկզբին նա վնուում է տեղափոխվել Սամարա հաղաքից 60 վերս հեռու գտնվող «Ղրմրզի» կոչված բուժարանը: Բայց մինչեւ տեղափոխվելը ամեն բան վերջացած էր: Քանի գարունը առաջ էր զնում, այնին նրա արագընթաց բոքախոր սասկանում էր: Վերջապէս 1866 թուականի մարտի 31-ին անողոք մարի կտրում է նրա համեմատաբար շաման, բայց եւ շամ փորկալից կեանքի բելը:

Մահուան լուրը հասնում է նրա ծննդավայրը եւ ահագին

վիշ պատճառում բոլոր երա բարեկամներին, ծանօթներին եւ ընկերներին: Երախտազիւս Նախիջեւանցիները, մանաւանդ հանգուցեալի բարեկամները, վեռում են երա դիակը Նախիջեւան բերել սայ:

Սլդպէս էլ լինում է: Շատ հանդիսաւոր կերպով է նկարագրում Պ. Ե. Շահազդը այն տիուր օրը, երբ Նալբանդեանցի դիակը հասնում է Նախիջենան: Այդ օրը 1866 թաշկանի ապրիլի 15-ն էր, մի օր, որ այժմ էլ չի ջնջվել ժամանակակիցների լիռողութիւնից: Ընդունելութիւնը կատարվում է շատ փառանել եւ հանդիսաւոր: Առանց բացառութեան ամբողջ բաղաքը ներկայ է լինում տիուր հանդիսին, բոլորը, մեծ թէ փոքր, հարուս թէ աղքատ դուրս են գալիս բաղաքից բանկագին դագաղը դիմաւորելու:

Դագաղը ընդունվում է ս. Լուսաւորիչ եկեղեցում։ Հետեւեալ օրը կատարվում է ժիուր պատարագը ահազին բազմութեան ներկայութեամբ, խօսվում են դամբանականներ, եւ ամենի աշերից բափվում է անկեղծ արտասուե։ Պատարագից յետոյ բազմութիւնը դիմում է բաղաքից դուրս։ Վճռված է լինում բաղաքից եօր վերս հեռու գտնվող ս. հաջ վանիում ամփոփել հանգուցեալի մարմինը։ Եւ այդ ամբողջ եօր վերս տարածութիւնը հանգուցեալի անքի երկրապագուները իրանց ուսերի վրայ են տանում նրա դագաղը։

Եւ ահա այսօր ել այդ վտնիքի բակումն է ամփոփւած ուռ-սահայերի ամենաառաջին, ամենատղանաւոր եւ ամենահամար-ձակ հրապարակախօսի եւ եռանգուն հասարակական գործիչի մարմինը...

Ներկայ համառօս կենսագրութիւնը նկրտումներ չուներ տալ Նալբանդեանցի բարդ եւ բեղմնաւոր գործունեութեան կարակերի փաստական: Մենք բաւականացանք առաջ բերելով նրա կեանքի միայն չոր ու ցամաք նկարագիրը: Նա, ով որ կամենում է Նալբանդեանցի կենսագրութեան հետ աւելի մօտիկ ծանօթանալ, բող կարդայ Պ. Ե. Շահազիկի բնդարձակ աշխատութիւնը: Այդ աշխատութիւնը, որ «Հանդէս գրականական եւ պատմական» ժողովածուի VII-դ հատորում բնուում է աւելի բան 160 երես, արժանի է ուշադրութեան: Նրա հեղինակը, ի միջի ալլոց, բնորոշում է Նալբանդեանցի գործունեութիւնը եւ, մեր կարծիքով, բաւական բարեխիլն կերպով:

Մենք միայն կը շատանանք առաջ՝ բերելով այդ ընդարձակ յօդուածից Նալբանդեանցի գրականական աշխատութիւնների լրկ ցուցակը եւ դրանով կաւարտենք մեր համառօս կենսագրութիւնը:

Ահա հանգուցեալի վերջացրած եւ առանձին զրբերով հրա-  
սարակված երկերը.

- 1) Թափառական Հրէսա.—Եօմէն Սիւ, բարզ. մի լողարձակ յառաջաբանով Յիսուսեան կարգի արելպաների մասին: Հատու Ա. Մուկվա, 1857 թ.:
  - 2) Դիմունի դր-Շենքեօց. Կիեման Ոօքերտի, բարզ., արտաքարածած «Հիսիսափայլից»: Մուկվա, 1858 թ.:
  - 3) Մինին խօսք, միւսին հարս, իննուրոյն վկա. Մուկվա, 1857 թ.:
  - 4) Երկու տոլ, իննուրոյն. Փարիզ, 1861 թ.:
  - 5) Ղազար Փարավեցու դրի բարգմանուրինը. Պետքարբուրգ, 1868 թ.:

«Հիւսիսափայլի» առաջին երեք տարուայ տեսրակներում հրաշարակուած էն.

- 1) Յիշատակարան Կոմս Հմիմանուէլի օրագրական թերթերից, 1858 թ., ամսատեսրակ 4, 5, 6, 7, 8, 9 եւ 10: 1859 թ., ամսատեսրակ 1, 2, 8, 9 եւ 11: 1860 թ., ամսատեսրակ 5 եւ 6:
  - 2) Թալլիսմաններ, զործ Ֆաբր դ'Օլիվիէ. 1858 թ., ամսատեսրակ 12:
  - 3) Միսիքար եւ Ախիքարեանն. 1858 թ., ամսատեսրակ 5, 6 եւ 11:
  - 4) Մեռելամարցուկ. 1859 թ., ամսատեսրակ 8, 9 եւ 10:
  - 5) Բանասեղծութիւններ. 1858 թ., ամսատեսրակ 3, 4, 5 եւ 11: 1859 թ., ամսատեսրակ 6 եւ 9: 1860 թ., ամսատեսրակ 7:
  - 6) Կրիսիկա, 1858 թ., ամսատեսրակ 1 եւ 5:
  - 7) Մանր յօդուածներ. Նամակ առ «Հյուսիսպայլի» հրատարակող. 1858 թ., ամսատեսրակ 4 եւ 11: Պրովերջիա Բոսփ. 1858 թ., ամսատեսրակ 4: Աչխարքի կազմուածր եւ նորա հրատանիները. 1858 թ., ամսատեսրակ 3: Դամբանական. 1858 թ., ամսատեսրակ 2: Նկատողութիւնն. 1858 թ., ամսատես. 10: Ազգային ծառանորութիւնն. 1859 թ. ամսատես. 5:

Գրականական եւ պատմական Հանդիսի գրեթերում սպլած են.

1) Բանասեղծութիւններ. (II, III, IV):  
 2) Երկու խօս—յառաջաբան (II):  
 3) Սու և Վարդիկեր, վեպ Պերն Պուօչեանցի, բննութիւն. (III):  
 4) Յաղագ հայկական դպրութեան հան. (VI):

*Skr-Fարբիկ Պատկանիանցի Արարատում սպած էն.*

1) Բանասեղծութիւններ՝ մԵկը աշխարհաբար, երկուսը գրապար. «Արարատ» 1851 թ., №№ 27, 32 և 33:

Կ. Պօլսի «Մեղուում» սպած էն մի շարք յօրուածներ Պօղոսեան և Ապօղոսեան խնդրի վերպերեմամբ և Զամուռնեանի դէմ:

«Փորձ» ամսագրի 1881 թուականի հինգերորդ գրքում տպված  
է «Սատանայի պատօնական մեծ հանդէսը»:

Հանգուցեալի ամսից աշխատուրիւմներից յայտնի են.

- 1) Փորձ արդի աշխարհաբառ լեզուի ենրականութեան (կիսատ):
- 2) Ենրամաբուժութիւն (չի գտնվում):
- 3) Աղցմիք (գրաբար բանասնեղութիւններ):
- 4) Ասուածաւնչի համեմատութեան նիւթեր:
- 5) Ֆիզիկա-միոլոգիական — պատմաբանական—աշխարհագր-  
ական ներածութեան նիւթեր (կորած):
- 6) Քիմիայի համար համապատասխանական:



3564  
3565  
3566  
3567  
3568  
3569

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0495417

ՀՀ Ազգային գրադարան



NL0495412

ՀՀ Ազգային գրադարան



NL0495410

ՀՀ Ազգային գրադարան



NL0495408

ՀՀ Ազգային գրադարան



NL0495407

ՀՀ Ազգային գրադարան



NL0495406

